մի արձանագրության մեջ իրեն «թագաղն եւ աշխարհակալ» է անվանում *։ Վարդան պատմիչ յիշում է, թե Զաքարիայի վորդին Շահնշահ յուր անունն ստացել է «ի պատիւ տէրութեանն Անւոյ», գուցե և Շիրակի գրավման առթիվ, յերբ մոտավորապես պետք է ծնված լինի նա. նորա իսկական անունը Սարգիս է **։ Այս ձգտումը՝ Բագրատունի թագավորների տիտղոսներով յերևան գալ կամ Բագրատունյաց ժառանգներ հանդիսանալ՝ իրական մի ապացույց է նոցա գերագույն իշխանության Հայաստանում, պատմական բերմունքով Վրաց ընդհանուր հովանավորության տակ. նոքա կամենում են վերակենդանացնել Բագրատունյաց ավանդությունները, իբրև Հայաստանի գերագույն իշխաններ։ Տարաբաղդաբար մեր ձեռքի տակ յեղած աղբյուրները բավարար չափով չեն պարզում, թե վերջինի իրավական հարաբերության մեջ եր Զաքարյանների նորանվաճ Հայաստանը Վրաց թագավորության հետ։ Զաքարյանների այն բարձր և բացառիկ դիրքը, վոր մենք տեսանք Վրաց պետության մեջ, ապացույց կարող է լինել, թե այդ կախումը չպետք է շատ զորեղ լիներ. ամիր սպասալարությունն ու աթաբեկությունը ժամանակի վոգու հետ կապված մի յերևույթ եր. յերկու տիտղոսներն ու պաշտոններն էլ առնված հարևան Պարսիկներից, գուցե մասամբ և Ասորիքից, ուր քայքայվել սկսող Սելջուկյան մեծ պետության մեջ թույլ թագավորների կողքին յերևան են գալիս բարձր զորապետներն ու աթաբեկները, իսկական կառավարիչը հանդիսանալով պետության և հետզհետե անկախ իշխանություններ հաստատելով այլ և այլ մասերում։ Զլիներ Խորազմների և ապա թաթարական մեծ արշավանքն ու տիրապետությունը, Զաքարյանների նորահաստատ պետությունն էլ, հաւանորեն, նույն ճանապարհով պիտի գնար, ինչպես մակաբերել կարելի է նրանց գործածած տիտղոսներից և պետությունը բնորոշող արտահայտություններից։

Բայց Զաքարյանները միահեծան պետություն չկազմեցին, այլ յերկու յեղբայրներով յերկու ճյուղի բաժանված ավագ կամ աղդեցիկ ներկայացուցչի գերիշխանության տակ՝ հառաջ բերին հայ իշխանությունների մի ամբողջ ցանց նորանվաճ յերկրում։ Զաքարյանների բարձրանալուց առաջ դեռ ևս կային հայ իշխանական մի քանի տոհմերի ճնացորդներ, վորոնք ապավինած իրենց լեռների բարձունքներին, անձնական ջանքերով պահել եյին իրենց գոյությունը. այդպիսիներից եյին Արցախի կամ Խաչենի յերկճյուղ իշխանությունները՝ Խոխանաբերդում և Հաթերքում, իրենց ստորադրյալ ավելի փոքր իշխանություններով կամ ազատներով. Կորիկյանց տան ճնացորդները Լոռում և ապա Մածնաբերդում. Մահկանաբերդի, Համազասպյանց կամ Մամիկոնյանց իշխանությունները Կայենո և Լոռի գավառներում, վորոնք Զաքարյանների բարձրանալուց առաջ հաստատված եյին արդեն այստեղ. և վերջապես Պահլավունիք Անիում կամ շրջակայքում։ Բայց սրա բոլորն էլ այնպես ընկճված եյին և փոքրացած Սելջուկյան տիրապետության տակ, վոր նոցա մասին գրեթե յիշատակություն չունինք ԺԲ. դարու կեսերից առաջ. վիրական հաջողություններով և մանավանդ Զաքարյանց յերկու յեղբայրների նվաճողական պատերազմներով վերակենդանանում և դեր են սկսում կատարել և սրա։ Զաքարյանների խոհեմ քաղաքականությանն ենք պարտական ԺԳ. դարու քաղաքական վերածնությունը. նոքա մի կողմից խնամեական կապերով մոտենում են հնուց ճնացած հայ իշխանական տոհմերի հետ, դաշնակից դարձնում կամ իրենց յենթարկում *, մյուս կողմից կազմում են նոր իշխանություններ իրենց գերագույն հովանավորության տակ։ Մահկանաբերդի իշխանների կապը տեսանք վերև. Սարգիս մեծի կինը Սահակդուխտ՝ Զաքարեի և Իվանեի մայրը, Քուրդ իշխանի քույրն եր **. Բագնայրի ավետարանի հիշատակարանի համեմատ Զաքարյանների մի ուրիշ մորյեղբայրն եր Սարգիս կամ ամիր Սարգիս, վորի վորդին Խաւռաս գրել և նկարազարդել է տվել այս մեծադիր և շքեղ յերկաթագիր ավետարանը ի յիշատակ յուր վաղամեռ վորդի Սասնային։ Նորան եր հանձնված Շահնշահ մեծի և ապա սորա վորդի Զաքարիայի կրթությունը իբրև Զաքարիայի տան «մսախուր թախուցչէս, որ ըստ մերումս թարգմանի, գլուխ իշխեցող եւ հրամանատար ամենայն իշխեցողաց և գլխաւորաց տան թագաւորութեան տեառն իւրոյ» ***։

Պահլավունիք, Հոնենք և ուրիշ տոհմեր աջակից են Զաքարյաններին Անիի կառավարության գործում վորպես պաշտոնյաներ [1]. Զաքարեյի և Իվանեյի քույրե-

---

Ստեփ. Վարդ. Մխիթարյան. Ստորագրություն Այրի վանաց Ս. Գեղարդա. Վաղարշ. 1873 յեր. 27։

* Արձ. Գեղարդի. տ. Հավել. Ա. 4. Համ. Մխիթարյան. Անդ. յեր 16. սխալաշատ և պակասավոր։

** Ալիշան. Շիրակ 41, Վարդան. Հրատ. Եմինի. Մոսկվա 1861. 183։

* Հասան Ա.-ի վորդին Գրիգոր Դոփյան քիչ հետո մեջ բերված Որթաբիլիսայի ավետարանի պահպանակ յիշատակարանի մեջ Ավագին անվանում է «պարոնն իմ»։

** Նույն գրքի մեջ յեր. 9։

*** Մեր Գրչության արուեստը. Գիրք Գ. յեր. 33. Եջմ. Ձեռ. № 230. 297ա. «Իշխանն պատրոն Խաւռաս որդի ամիր Սարգսին որ էր եղբայր մաւր կեսառոսաց Հայոց եւ Վրաց եւ ամենայն Ափխազաց բարեպաշտիցն եւ ամ զաւրացելոցն մեծին Զաքարիայի եւ Իւանէի»։

1 Շահնշահի ժամանակ՝ (1218 թ.) ամիրայության պաշտոն եր կատարում Անիում Վահրամ (Շիրակ 43. 49). ճշդագույն ընթերցվածը յերկրորդ արձանագրության Н. Я. Марр՝ Надпись Епифания католикоса Грузии СП. 1910. Արտատպ. Извест. Имп. Акад. Наук 1910. 1433—1442։ Հավանորեն Վահրամ ամիրան Պահլավունի եր, ինչպես Պահլավունի յե և Յեպիփանի արձանագրության տակ յիշված Գրիգոր յեպիսկոպոսը (որդի Ապուղամրի. Շիրակ 121 ևն)։ Անիի և շրջակա վանքերի արձանագրությունների մեջ յիշատակվում են Պահլավունի մի քանի յեպիսկոպոսներ. վոր